Հավելված 1

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի

2024 թվականի հուլիսի 19-ի N 04- L որոշման

ԿԱՐԳ

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

Բովանդակություն

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4

III. ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ՝ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ.....6

1. Թեկնածուի կենսագրական տվյալներ.....6

2. Թեկնածուի կրթության, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ ուսումնական հաստատության, աշխատավայրի (նախկին և ներկա) անվանումը (անվանումները), զբաղեցրած պաշտոնը (պաշտոնները).....8

3. Թեկնածուի՝ շահերի վերաբերյալ տեղեկություններ.....12

4. Թեկնածուի քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու, նրա նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացված լինելու, հայցվոր կամ պատասխանող հանդիսանալու վերաբերյալ տեղեկություններ.....14

5. Հավակնորդի (Թեկնածուի)՝ քրեական օրենսգրքի համաձայն քրեական ենթամշակույթին հարելու վերաբերյալ տեղեկություններ.....19

6. Թեկնածուի, ինչպես նաեվ «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի իմաստով նրա ընտանիքի անդամների գույքային դրության վերաբերյալ ամփոփ տեղեկություններ.....20

IV. ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 36

Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) նախատեսում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով հանրային պաշտոնի նշանակման ենթակա անձանց կողմից բարեվարքության հարցաթերթիկի (այսուհետ՝ Հարցաթերթիկ) լրացման մանրամասները և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացնելու կառուցակարգերը:

Հարցաթերթիկը կազմված է վեց գլուխներից, որոնք համապատասխանում են Օրենքի 26.1-ին հոդվածով սահմանված պահանջներին:

Համաձայն Օրենքի վերոնշյալ հոդվածի՝ Հարցաթերթիկում լրացման ենթակա են՝

1. Թեկնածուի և «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրա ընտանիքի անդամների (սույն հոդվածում այսուհետ՝ ընտանիքի անդամներ) գույքային դրության՝ գույքի և եկամտի վերաբերյալ «Հանրային ծառայության մասին» օրենքի 40-րդ և 41-րդ հոդվածներով նախատեսված տեղեկություն.

2. Թեկնածուի կրթության, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ ուսումնական հաստատության, աշխատավայրի (նախկին և ներկա) անվանումը (անվանումները), զբաղեցրած պաշտոնը (պաշտոնները).

3. Թեկնածուի քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու, նրա նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացված լինելու, հայցվոր կամ պատասխանող հանդիսանալու վերաբերյալ տեղեկություն.

4. «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով

մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված լինելու վերաբերյալ տեղեկատվություն.

5. Քրեական ենթամշակույթին հարելու վերաբերյալ տեղեկատվություն:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հարցաթերթիկ ներկայացնում են օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձինք:

2. Հարցաթերթիկի առաջին էջի ներքևի աջ անկյունում Հարցաթերթիկի ներկայացման ամսաթիվը նշելուց հետո սկսել լրացնել Հարցաթերթիկը՝ ըստ բաժինների:

3. «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով Թեկնածուի ընտանիքի անդամներն են՝ ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), Թեկնածուի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, Թեկնածուի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ: Համատեղ բնակվող են համարվում Թեկնածուի հետ Հարցաթերթիկի լրացման օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում 183 և ավելի օր համատեղ բնակվող անձինք:

4. «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով Թեկնածուի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք են համարվում Թեկնածուի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, ամուսնու զավակը, ամուսնու եղբայրը, ամուսնու քույրը:

5. Բարեվարքության հարցաթերթիկի **«Լրացուցիչ տեղեկություններ»** դաշտում Թեկնածուի կողմից լրացվում են բոլոր այն տեղեկությունները և դրանց մանրամասները, որոնք Թեկնածուի կողմից հնարավոր չի եղել լրացնել համապատասխան բաժիններում, սակայն վերջինս անհրաժեշտ է համարում դրանք ներկայացնելու:

6. Բարեվարքության հարցաթերթիկի «Գույքային դրության վերաբերյալ ամփոփ տեղեկություններ» բաժնում տվյալները լրացվում են հարցաթերթիկի ներկայացման օրվան նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ:

- Յուրաքանչյուր բաժնի հարցերի դաշտում՝ գունանշված դաշտի անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ ձախ անկյունում **«Դաշտեր» պանելի (+)** կոճակի միջոցով համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացվում է վերաբերելի հարցի պատասխանը:

Մի քանի պատասխանի առկայության դեպքում նույն կոճակի միջոցով հնարավոր է համապատասխանաբար ավելացնել մի քանի սյունակ: Նույն սկզբունքով ավելորդ բացված սյունակը հեռացնելու համար անհրաժեշտ է սեղմել **«Դաշտեր» պանելի (-)** կոճակը:

- Այն դեպքում, երբ հարցերը Թեկնածուին վերաբերելի չեն, սյունակ ավելացնելու կամ վանդակը լրացնելու անհրաժեշտությունը բացակայում է: Այդ հատվածներն անհրաժեշտ է թողնել առանց լրացնելու:

Ընդհանուր լրացվածության ամբողջականությունը ստուգելու և սխալները հայտնաբերելու համար անհրաժեշտ է սեղմել **«Մանրամասն հաշվետվություն»** կոճակը: Բացվող էջում **«X» կարմիր գունանշված պայմանանշանը** հայտնում է, որ նշված տողերում առկա են չլրացված պարտադիր դաշտեր. անհրաժեշտ է վերադառնալ համապատասխան բաժնի համապատասխան հարցին և լրացնել պահանջվող տվյալները:

Հարցաթերթիկը արտահանելու համար անհրաժեշտ է, որ ընդհանուր լրացվածության աստիճանը կազմի 100 %:

Հարցաթերթիկը լրացնելուց, տվյալների և լրացման ենթակա դաշտերի ամբողջականությունը ստուգելուց հետո անհրաժեշտ է սեղմել **«Արտահանել հարցաթերթիկը»** կոճակը:

Համակարգն ավտոմատ կարգով արտահանում է Թեկնածուի լրացրած հարցաթերթիկը PDF ձևաչափով: Ամբողջականացված PDF փաստաթղթում տառաչափը հնարավոր է ավելի փոքր լինի՝ կախված լրացված դաշտերի քանակից:

III. ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ՝ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ

1. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հարցաթերթիկի **«Անձի կենսագրական տվյալներ»** բաժնում լրացվում են նրա կենսագրական տվյալները, այդ թվում՝ հաշվառման և փաստացի բնակության, ինչպես նաև վերջին 5 տարիների բնակության հասցեի (հասցեների) վերաբերյալ մանրամասներ, բջջային և քաղաքային հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն (հասցեները):

1.1. «Անուն, ազգանուն, հայրանուն» ենթաբաժնում Թեկնածուն լրացնում է.

-անունը, ազգանունը, հայրանունը՝ համաձայն անձնագրային տվյալների:

1.2. Եթե Թեկնածուն նախկինում օգտագործել է այլ անուն, ազգանուն, ապա **«Արդյոք օգտագործե՞լ եք այլ անուն, ազգանուն»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-այն անուն ազգանունը, որն օգտագործել է,

-օգտագործման ժամանակահատվածը՝ սկիզբը, ավարտը,

-անվան, ազգանվան փոփոխության պատճառը, փոփոխված անվան օգտագործման դադարեցման պատճառը:

1.3. Թեկնածուն համապատասխան ենթաբաժնում լրացնում է իր ծննդյան օրը, ամիսը, տարին:

1.4. Թեկնածուն համապատասխան ենթաբաժնում լրացնում է.

-իր հանրային ծառայության համարանիշը,

-անձնագրի սերիան և համարը,

-կենսաչափական անձնագրի սերիան և համարը,

-նույնականացման քարտի համարը:

1.5. Թեկնածուն համապատասխան ենթաբաժնում լրացնում է հաշվառման հասցեն՝ նշելով մանրամասները՝ ներկայացված ցանկից ընտրելով հաշվառման հասցեի մարզը, քաղաքը, փողոցը (այդ թվում՝ փողոցի համարը), շինության տիպը (շենք/տուն), բնակարանի/ բնակելի տան համարը՝ ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների:

1.6. Եթե, Թեկնածուի փաստացի բնակության հասցեն տարբերվում է հաշվառման հասցեից, ապա **«Արդյոք փաստացի բնակության հասցեն տարբերվու՞մ է հաշվառման հասցեից»** ենթաբաժնիսյունակներում գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-փաստացի բնակության հասցեի մանրամասները, ներառյալ՝ մարզը, քաղաքը, փողոցը (այդ թվում՝ փողոցի համարը), շինության տիպը (շենք/տուն), բնակարանի/բնակելի տան համարը:

1.7. Թեկնածուն համապատասխան ենթաբաժնում նշում է անձնական բջջային հեռախոսահամարը (առկայության դեպքում նաև՝ քաղաքային ֆիքսված հեռախոսահամարը,

1.8. Թեկնածուն համապատասխան ենթաբաժնում նշում է էլեկտրոնային փոստի հասցեն:

1.9. Եթե, Թեկնածուն վերջին 5 տարում ունեցել է բնակության այլ հասցեներ, ապա **«Արդյո՞ք վերջին 5 տարում ունեցել եք բնակության այլ հասցեներ»** ենթաբաժնի գունանշված դաշտի անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-վերջին 5 տարիների ընթացքում բնակության հասցեների վերաբերյալ մանրամասները՝ հակառակ ժամանակագրական հերթականությամբ, ներառյալ՝ բնակության մարզը, քաղաքը, փողոցը (այդ թվում՝ փողոցի համարը), (շենք/տուն), բնակարանի/բնակելի տան համարը, բնակվելու ժամանակահատվածի սկիզբը, ավարտը:

2. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ (ՆԱԽԿԻՆ և ՆԵՐԿԱ) ԱՆՎԱՆՈՒՄԸ (ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ), ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ (ՊԱՇՏՈՆՆԵՐԸ)

Հարցաթերթիկի **«Թեկնածուի կրթության, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ ուսումնական հաստատության, աշխատավայրի (նախկին և ներկա) անվանումը (անվանումները), զբաղեցրած պաշտոնը (պաշտոնները)»** բաժնում ներկայացվում է Թեկնածուի կրթության, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ ուսումնական հաստատության, աշխատավայրի (նախկին և ներկա) անվանումը (անվանումները), զբաղեցրած պաշտոնը (պաշտոնները):

2.1. «Դպրոցական կրթություն» ենթաբաժնում Թեկնածուն գունանշված դաշտի դատարկ սյունակներում լրացնում է՝

-դպրոցի անվանումը,

-ուսումնառության սկիզբը, ավարտը՝ ըստ տարիների,

-ստացված վկայականը:

2.2. Եթե Թեկնածուն ունի նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթություն, ապա **«Արդյոք ստացե՞լ եք նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթություն»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական հաստատության անվանումը,

-ուսումնառության սկիզբը, ավարտը,

-ստացված վկայականը (որակավորումը):

2.3. «Բարձրագույն կրթություն» ենթաբաժնում Թեկնածուն լրացնում է.

-բարձրագույն կրթական հաստատության անվանումը,

-ուսումնառության սկիզբը (օրը, ամիսը, տարին),

-ուսումնառության ավարտը (օրը, ամիսը, տարին),

-ավարտական փաստաթուղթը (կրթական աստիճանը),

-ավարտական աշխատանքի թեման, եթե առկա է:

2.4. Եթե Թեկնածուն ունի հետբուհական կրթություն, ապա **«Արդյոք ստացե՞լ եք հետբուհական կրթություն»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-հետբուհական կրթական հաստատության անվանումը,

-ուսումնառության սկիզբը՝ օրը, ամիսը, տարին,

-ուսումնառության ավարտը՝ օրը, ամիսը, տարին,

-ավարտական փաստաթուղթը (կրթական աստիճանը),

-ավարտական աշխատանքի թեման (եթե առկա է) :

2.5. Եթե Թեկնածուն ստացել է անվանական կրթաթոշակ (կրթաթոշակներ) և կրթական դրամաշնորհ (դրամաշնորհներ), ապա **«Ստացված անվանական կրթաթոշակներ և կրթական դրամաշնորհներ»** ենթաբաժնի գունանշված դաշտի անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-կրթաթոշակի/դրամաշնորհի տեսակը/ անվանումը,

-դրամաշնորհի տրամադրման սկիզբը՝ ամիսը, տարին,

-դրամաշնորհի տրամադրման ավարտը՝ ամիսը, տարին,

-կրթաթոշակի կամ դրամաշնորհի չափը,

-կրթաթոշակը տրամադրող կազմակերպության անվանումը,

-կրթաթոշակը/դրամաշնորհը դադարեցնելու պատճառը (եթե վերաբերելի է) :

2.6. Եթե Թեկնածուն ունի կոնկրետ գործունեությամբ զբաղվելու արտոնագրեր/հավաստագրեր, ապա **«Արդյոք առկա՞ են կոնկրետ գործունեությամբ զբաղվելու արտոնագրեր/հավաստագրեր»** ենթաբաժնի գունանշված դաշտի անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-արտոնագրի/հավաստագրի անվանումը,

-արտոնագրի/հավաստագրի գործողության սկիզբը՝ օրը, ամիսը, տարին,

-արտոնագրի/հավաստագրի գործողության ավարտը՝ օրը, ամիսը, տարին,

-արտոնագիր/հավաստագիր տրամադրող կառույցի անվանումը,

-արտոնագրի/հավաստագրի տեսակը,

-արտոնագրի/հավաստագրի գործողության դադարեցման կամ կասեցման պատճառը (եթե վերաբերելի է) :

2.7. Եթե Թեկնածուն ունի աշխատանքային փորձառություն և մասնագիտական գործունեություն, ապա **«Արդյոք առկա՞ է աշխատանքային փորձառություն և մասնագիտական գործունեություն»** ենթաբաժնի գունանշված դաշտի անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-հաստատության անվանումը,

-զբաղեցրած պաշտոնների սկիզբը (ամիսը և տարին),

-զբաղեցրած պաշտոնների ավարտը (ամիսը և տարին),

-զբաղեցրած պաշտոնը,

-աշխատանքի դադարեցման պատճառը (եթե վերաբերելի է) :

Ընդ որում, աշխատանքային փորձառության և մասնագիտական գործունեության վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ նույն հաստատությունում պաշտոնների փոփոխությունները լրացնել հակառակ ժամանակագրական հաջորդականությամբ:

2.8. Եթե Թեկնածուի նկատմամբ կիրառվել են աշխատանքային խրախուսանքներ, պարգևներ, մրցանակներ, ապա «**Արդյոք առկա՞ են աշխատանքային խրախուսանքներ, պարգևներ, մրցանակներ»** ենթաբաժնի գունանշված դաշտի անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-աշխատանքային խրախուսանք տրամադրած հաստատության անվանումը,

-զբաղեցրած պաշտոնը,

-խրախուսանքի տեսակը,

-տրամադրման հիմքը/առիթը,

-տրամադրման օրը, ամիսը, տարին:

2.9. Եթե Թեկնածուն վերջին 5 տարվա ընթացքում իրականացրել է մասնագիտական այլ գործունեություն, (ներառյալ հասարակական կամ կամավորական աշխատանք), ապա **«Արդյոք վերջին 5 տարվա ընթացքում մասնագիտական այլ գործունեություն իրականացրե՞լ եք (ներառյալ՝ հասարակական և կամավորական աշխատանքը) »** ենթաբաժնի գունանշված դաշտի անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-կազմակերպության անվանումը,

-իրականացրած գործունեության սկիզբը (ամիսը և տարին),

-իրականացրած գործունեության ավարտը (ամիսը և տարին),

-զբաղեցրած պաշտոնը,

-գործունեության դադարեցման պատճառը (եթե վերաբերելի է) :

3. ԹԵԿՆԱԾՈՒԻ՝ ՇԱՀԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցաթերթիկի **«Թեկնածուի շահերի վերաբերյալ տեղեկություններ»** բաժնում լրացվում են Թեկնածուի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց վերաբերյալ տվյալները, ովքեր «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով պաշտոն են զբաղեցնում:

3.1. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող/զբաղեցրած անձանց հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով առկա է մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապ, ապա **«Արդյոք ունե՞ք «Հանրային**

ծառայության մասին» օրենքի իմաստով մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձ, ով զբաղեցնում է կամ երբևէ զբաղեցրել է հանրային պաշտոն» ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում ընտրում է/լրացնում է.

-կապը Թեկնածուի հետ (ամուսին, ծնող, չափահաս զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, ամուսնու զավակ, ամուսնու եղբայր, ամուսնու քույր),

-մերձավոր ազգականի կամ խնամիությամբ կապված անձի անունը, ազգանունը, հայրանունը,

-գործատուի անվանումը,

-զբաղեցրած պաշտոնը (ըստ ժամանակագրական հաջորդականության),

-մերձավոր ազգականի կամ խնամիությամբ կապված անձի պաշտոնավարման ժամկետի սկիզբը (օրը, ամիսը, տարին)

-մերձավոր ազգականի կամ խնամիությամբ կապված անձի պաշտոնավարման ժամկետի ավարտը (օրը, ամիսը, տարին)

3.2. Եթե վերջին 3 տարիների ընթացքում առկա է Թեկնածուի կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրա ընտանիքի անդամի անդամակցություն կուսակցություններին և ներկայացվածություն դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, ապա **«Արդյոք առկա՞ է Ձեր կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով Ձեր ընտանիքի անդամի անդամակցություն կուսակցություններին և ներկայացվածություն դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում (վերջին 3 տարիների ընթացքում)»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-կուսակցության անվանումը,

-կուսակցության անդամ հանդիսացող անձի անունը, ազգանունը, հայրանունը,

-կուսակցությունում անձի կարգավիճակը,

-անդամակցության սկիզբը (օրը, ամիսը, տարին),

-անդամակցության դադարեցումը (օրը, ամիսը, տարին),

-կուսակցությունից դուրս գալու պատճառը (եթե վերաբերելի է):

3.3. Եթե Թեկնածուն ունի կամ ունեցել է գրանցված հաշիվ/հաշիվներ սոցիալական ցանցերում, ապա **«Արդյոք Դուք օգտագործում ե՞ք կամ վերջին 3 տարիների ընթացքում օգտագործել եք սոցիալական ցանցերի օգտահաշիվներ»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-իր կողմից օգտագործած սոցիալական ցանցերի անվանումները (օրինակ՝ Linkedin, Facebook, Twitter, Instagram և այլն),

-սոցիալական ցանցում գրանցված օգտատիրոջ հղումը (օրինակ՝ https://www.linkedin.com/in/usname),

-սոցիալական ցանցերում գրանցված հաշիվների օգտագործման ժամանակահատվածի սկիզբը (տարին),

-սոցիալական ցանցերում գրանցված հաշիվների օգտագործման ժամանակահատվածի ավարտը (տարին),

-օգտահաշիվների դադարեցման դեպքում՝ պատճառը:

4. ԹԵԿՆԱԾՈՒԻ ՔՐԵԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՄ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ, ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՉ ՌԵԱԲԻԼԻՏԱՑՆՈՂ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՉՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԿԱՄ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ

ԼԻՆԵԼՈՒ, ՀԱՅՑՎՈՐ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեկնածուի քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է՝

- տվյալներ վերջին 10 տարվա ընթացքում կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու մասին,
- տվյալներ վերջին 5 տարվա ընթացքում վարչական պատասխանատվության ենթարկված լինելու մասին:

Ճանապարհային երթևեկության կանոնների և ավտոկայանատեղիների տեղական տուրքի վճարումների խախտման դեպքերով նշվում են վերջին 1 տարվա տվյալները:

- տվյալներ ողջ կյանքի ընթացքում քրեական պատասխանատվության ենթարկված լինելու, դատվածության, դրա վերացված կամ մարված լինելու մասին,
- տվյալներ քաղաքացիական գործի շրջանակներում վերջին 5 տարվա ընթացքում հայցվոր կամ պատասխանող հանդիսացած լինելու մասին:

4.1. Եթե Թեկնածուն վերջին տասը տարվա ընթացքում ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, ապա «**Արդյո՞ք վերջին 10 տարիների ընթացքում կարգապահական պատասխանատվության ենթարկվել եք**» ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու օրը, ամիսը տարին,

-հաստատության (կազմակերպության) անվանումը,

-կարգապահական պատասխանատվության տեսակը,

-կարգապահական պատասխանատվության հիմքը:

4.1.2. «**Կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ այլ տեղեկություններ**» ենթաբաժնում Թեկնածուն աջ անկյունում **«Դաշտեր»** պանելի (+) կոճակի միջոցով ավելացնելով համապատասխան դատարկ սյունակները՝ ներկայացնում է.

-հանգամանքների ամբողջական նկարագրությունը,

-տեղեկություններ, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը բողոքարկվել է և բողոքարկման հիմքը,

-բողոքարկման արդյունքում կայացված ուժի մեջ մտած և վերջնական որոշումը (գործի համարը) (եթե վերաբերելի է) :

4.2. Եթե Թեկնածուն վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել է վարչական պատասխանատվության, ապա **«Արդյո՞ք վերջին 5 տարվա ընթացքում վարչական պատասխանատվության ենթարկվել եք»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-վարչական պատասխանատվության տեսակը,

-վարչական պատասխանատվության հիմքը,

-վարչական պատասխանատվության (օրը, ամիսը, տարին),

-վարչական պատասխանատվություն կիրառող մարմինը:

4.2.2. «Վարչական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ այլ տեղեկություններ» ենթաբաժնում Թեկնածուն աջ անկյունում **«Դաշտեր»** պանելի (+) կոճակի միջոցով ավելացնելով համապատասխան դատարկ սյունակները լրացնում է.

-հանգամանքների ամբողջական նկարագրությունը,

-տեղեկություններ, եթե վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը բողոքարկվել է, և բողոքարկման հիմքը,

-բողոքարկման կողմը (եթե վերաբերելի է),

-բողոքարկման արդյունքում կայացված՝ ուժի մեջ մտած և վերջնական որոշումը (գործի համարը) (եթե վերաբերելի է) :

4.3. Եթե Թեկնածուն ենթարկվել է քրեական պատասխանատվության, ապա **«Արդյո՞ք քրեական պատասխանատվության ենթարկվել եք»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-ՀՀ քրեական օրենսգրքի՝ հիմք հանդիսացած հոդվածը,

-քրեական գործ հարուցելու կամ քրեական վարույթ նախաձեռնելու օրը, ամիսը, տարին,

-դատական ակտի տեսակը և պատժատեսակը (գործի համարը) :

4.3.2. Եթե Թեկնածուի նկատմամբ կայացվել է քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, ապա **«Ձեր նկատմամբ երբևէ կայացվե՞լ է քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշում»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ հիմք հանդիսացած հոդվածը,

-քրեական գործի (վարույթի) սկիզբը (օրը, ամիսը, տարին),

-քրեական գործի (վարույթի) ավարտը (օրը, ամիսը, տարին),

-քրեական հետապնդում իրականացնող մարմնի անվանումը,

-քրեական հետապնդման մարմնի կողմից կայացված որոշումը:

4.4. Եթե առկա է դատվածություն, ապա **«Արդյոք առկա՞ է դատվածություն»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-դատական գործի համարը,

-պատժի տեսակը,

-ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը,

-պատժի չափը,

-դատական ակտի օրը, ամիսը, տարին:

4.5 Եթե դատվածությունը հանված (վերացված)/մարված է, ապա **«Արդյո՞ք դատվածությունը (վերացված)/մարված է»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-դատական գործի համարը,

-Քրեական օրենսգրքի հիմքը,

-դատական ակտի օրը, ամիսը, տարին:

4.6. Եթե Թեկնածուն քաղաքացիական գործի շրջանակներում վերջին 5 տարվա ընթացքում հանդես է եկել որպես հայցվոր կամ պատասխանող, ապա **«Արդյո՞ք քաղաքացիական գործի շրջանակներում վերջին 5 տարվա ընթացքում հանդես եկել եք որպես հայցվոր կամ պատասխանող»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-կողմի կարգավիճակը,

-քաղաքացիական գործի համարը,

-պահանջը,

-դատական ակտի օրը, ամիսը, տարին,

-դատական ակտի բնույթը (հակիրճ նկարագրությունը):

5. ՀԱՎԱԿՆՈՐԴԻ (ԹԵԿՆԱԾՈՒԻ)՝ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՀԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրեական օրենսգրքի համաձայն՝ քրեական ենթամշակույթին հարելու վերաբերյալ տեղեկություններ բաժնում Թեկնածուն լրացնում է քրեական ենթամշակույթին հարելու վերաբերյալ տեղեկություններ:

5.1. Եթե Թեկնածուն որևէ կերպ առնչվել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ, ապա **«Երբևէ, որևէ կերպ առնչվե՞լ եք քրեական ենթամշակույթ կրող խմբավորման, կամ անձի հետ»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-քրեական ենթամշակույթ կրող անձի հետ (օրինակ՝ օրենքով գող, քրեական հեղինակություն) ազգակցական կամ ընկերական կապի առկայության վերաբերյալ,

-քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ անհատական հանդիպման վերաբերյալ,

-քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ հեռախոսային կամ այլ հեռահար հաղորդակցություն ունենալու վերաբերյալ,

-քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ անձնական, աշխատանքային կամ այլ կապ ունենալու վերաբերյալ:

5.2. Եթե Թեկնածուի ընտանիքի որևէ անդամ երբևէ, որևէ կերպ առնչվել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ, ապա **«Արդյոք տեղյա՞կ եք, որ Ձեր ընտանիքի որևէ անդամ երբևէ, որևէ կերպ առնչվել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման, կամ անձի հետ»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է.

-քրեական ենթամշակույթ կրող անձի հետ ազգակցական կամ ընկերական կապի առկայության վերաբերյալ,

-քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ անհատական հանդիպման վերաբերյալ,

-քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ հեռախոսային կամ այլ հեռահար հաղորդակցություն ունենալու վերաբերյալ,

-քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ անձնական, աշխատանքային կամ այլ կապ ունենալու վերաբերյալ:

6. ԹԵԿՆԱԾՈՒԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 34-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ՄԱՍԵՐԻ ԻՄԱՍՏՈՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցաթերթիկի **«Գույքային դրության ամփոփ տեղեկություններ»** բաժնում վերաբերելի ժամանակահատված է համարվում հարցաթերթիկի **ներկայացման օրվան նախորդող ամսվա վերջին օրը**:

6.1. Եթե Թեկնածուն ունի իր հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամներ *(Թեկնածուի հետ Հարցաթերթիկի ներկայացման օրվան նախորդող 183 օր և ավելի օր համատեղ բնակվող անձինք)*, ապա **«Ունե՞ք ընտանիքի անդամներ (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք)** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-անունը, ազգանունը և հայրանունը,

-կապը Թեկնածուի հետ (ընտրությամբ՝ ամուսին, անչափահաս զավակ (այդ թվում որդեգրված), խնամակալության/հոգաբարձության տակ գտնվող անձ, համատեղ բնակվող չափահաս անձ),

-ընտանիքի անդամի ծննդյան օրը, ամիսը, տարին,

-ընտանիքի անդամի անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

-ընտանիքի անդամի հանրային ծառայության համարանիշը (կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարը)

-ընտանիքի անդամի քաղաքացիությունը՝ նշելով երկիրը,

-ընտանիքի անդամի հաշվառման հասցեն,

-ընտանիքի անդամի բնակության հասցեն,

-պաշտոնը (աշխատանքային գործունեությունը)՝ վերաբերելիության դեպքում,

-գործատուի անվանումը՝ վերաբերելիության դեպքում:

6.2. Եթե Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները հանդիսանում են անշարժ գույքի սեփականատեր, ապա **«Արդյոք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները հանդիսանու՞մ եք (են) անշարժ գույքի սեփականատեր»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը,

-առկա անշարժ գույքի տեսակը, (ընտրությամբ՝ հողամաս, բնակարան, անհատական բնակելի տուն, ավտոտնակ և այլն),

-սեփականության իրավունքի տեսակը (ընտրությամբ՝ միանձնյա, համատեղ, բաժնային),

-սեփականատիրոջ բաժինը,

-գտնվելու վայրի հասցեն,

-անշարժ գույքի հաշվառման համարը,

-անշարժ գույքի մակերեսը,

-անշարժ գույքը ձեռք բերելու օրը, ամիսը, տարին,

-անշարժ գույքի ձեռքբերման եղանակը (ընտրությամբ՝ գնում, նվիրատվություն, ժառանգություն, այլ)

-ձեռքբերման գինը (արժեքը, արժույթը):

Լրացման ենթակա գույքը *(այդ թվում՝ անշարժ գույքը), որը հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը, լրացվում է այն ամուսնու անվամբ, ում սեփականության իրավունքը գրանցված է տվյալ գույքի նկատմամբ, իսկ եթե գրանցված է ամուսիններից յուրաքանչյուրի իրավունքը, ապա յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ տվյալ լրացվում է առանձին: Առանձին լրացնելու պահանջը վերաբերելի է նաև համատեղ սեփականությամբ ընտանիքի անդամների պատկանող գույքի վերաբերյալ տվյալների ներկայացմանը:*

Ամուսնության ընթացքում ամուսինների ձեռքբերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով և չի հանդիսանում ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը:

Տարաժամկետ վճարմամբ գույքի ձեռքբերման դեպքում գործարքի տվյալներն արտացոլվում են «գույքային դրության վերաբերյալ ամփոփ տեղեկություններ» բաժնում՝ համապատասխան ***«Ձեռքբերման արժեքը»*** *դաշտում նշելով գույքի ամբողջ արժեքը:*

Միաժամանակ, վաճառողին փաստացի չվճարված գումարի մնացորդը արտացոլվում է ***«Եկամուտներ»*** *բաժնում՝ որպես ստացված փոխառություն (օրինակ՝ եթե գույքի արժեքը կազմում է 100,000 ԱՄՆ դոլար, որի դիմաց տարաժամկետ վճարման պայմանով վճարվել է 80,000 ԱՄՆ դոլար, իսկ մնացած 20,000 ԱՄՆ դոլարը Թեկնածուն պարտավորվում է վճարել ավելի ուշ, ապա նման պարագայում անշարժ գույքի* ***«Ձեռքբերման արժեքը»*** *տողում նշվում է ամբողջ արժեքը՝ 100,000 ԱՄՆ դոլարը, իսկ դեռևս վճարման ենթակա 20,000 ԱՄՆ դոլարը՝ «Եկամուտներ» բաժնում): Վարկային միջոցներով գույքի ձեռքբերման դեպքում գործարքի փվյալներն արտացոլվում են որպես համապատասխան գույքի ձեռքբերում՝-նշելով գույքի ամբողջ արժեքը: Միաժամանակ, ստացված վարկի գումարը արտացոլվում է «Եկամուտներ» բաժնում՝ որպես ստացված վարկ:*

Բաժնային սեփականությամբ անձին պատկանող գույքերը ներկայացնելիս՝ Թեկնածուն ***«Ձեռքբերման արժեքը»*** *դաշտում նշում է գույքի միայն իրեն պատկանող մասի արժեքը: Համատեղ սեփականությամբ անձին պատկանող գույքերը ներկայացնելիս, որպես գույքի արժեք, նշվում է գործարքի ընդհանուր արժեքը (գինը): Այն դեպքում, երբ անշարժ գույքը ձեռք է բերվել նվիրատվության, ժառանգության կամ այլ եղանակով՝ ձեռքբերման գինը (արժեքը) սյունակում լրացնել* ***«0»,*** *իսկ ձեռքբերման արժույթը սյունակում՝* ***«AMD»:***

6.3. Եթե առկա է Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների հարցաթերթիկի լրացման օրվան նախորդող ամսվա վերջին օրվանից սկսած 1 տարվա ընթացքում 90 օր և ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները, ապա ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-տնօրինողի անունը, ազգանունը, հայրանունը,

-սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը,

-փաստացի տիրապետվող անշարժ գույքի տեսակը (ընտրությամբ՝ հողամաս, բնակարան, անհատական բնակելի տուն, ավտոտնակ և այլն),

-գտնվելու վայրի հասցեն,

-անշարժ գույքի հաշվառման համարը,

-անշարժ գույքի մակերեսը,

-սեփականատիրոջ հետ առկա կապի բույթը:

Փաստացի տիրապետվող գույք *է համարվում, գույքը որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի (սեփականատիրոջը), այսինքն՝ գույքի նկատմամբ գրանցված է Թեկնածուի կամ վերջինիս ընտանիքի անդամ չհանդիսացող երրորդ անձի սեփականության իրավունքը և առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝*

ա) գույքը ձեռք է բերվել Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների անունից/օգտին, այսինքն՝ գույքը փաստացի ձեռք է բերվել Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների համար: Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները չհանդիսանալով գույքի սեփականատեր, այնուամենայնիվ ունի(են) փաստացի հնարավորություն գույքի օգտագործման, պահպանման վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում, ***կամ՝***

բ) գույքը ձեռք է բերվել Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների հաշվին, այսինքն՝ գույքը ձեռք է բերվել Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների դրամական կամ այլ գույքային միջոցներով, վերջինիս հաշվին, ***կամ՝***

գ) այդ գույքից փաստացի օգուտ է ստանում Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները, այսինքն՝ թեև գույքի նկատմամբ Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների սեփականության իրավունքը գրանցված չէ, սակայն տվյալ գույքից օգուտ՝ եկամտի կամ որևէ այլ ձևով, ստանում է Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները: Օրինակ՝ այն դեպքում, երբ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող

բնակարանի վարձակալության վճարը, որպես եկամուտ ստանում է Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները, վերջինս պարտավոր է ներկայացնել այդ բնակարանը, ***կամ՝***

դ) այդ գույքը փաստացի տնօրինում է Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները, այսինքն՝ Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները գույքի ճակատագիրը որոշելու հարցում ունի(են) վճռորոշ ազդեցություն: Թեև Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները չի(են) հանդիսանում գույքի սեփականատեր, սակայն Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների անմիջական ազդեցությամբ է գույքի իրական սեփականատերը որոշում կայացնում այն վարձակալության հանձնելու, վաճառելու, նվիրելու և այլնի վերաբերյալ:

Այս ենթաբաժնում ներկայացման ենթակա չէ այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է Թեկնածուի ընտանիքի անդամին, որի վերաբերյալ տվյալները Թեկնածուն ներկայացրել է բարեվարքության հարցաթերթիկի «Արդյոք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները հանդիսանու՞մ եք (են) անշարժ գույքի սեփականատեր» ենթաբաժնում:

6.4. Եթե Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները հանդիսանում են տրանսպորտային միջոցի սեփականատեր, ապա **«Արդյոք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները հանդիսանու՞մ եք (են) տրանսպորտային միջոցի սեփականատեր»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը,

-առկա տրանսպորտային միջոցի տեսակը (ընտրությամբ՝ մարդատար, բեռնատար, ինքնագնաց, մոտոցիկլ, այլ),

-մակնիշը, սերիան,

-թողարկման տարին,

-նույնականացման համարը,

-տրանսպորտային միջոցի ձեռքբերման օրը, ամիսը, տարին,

-տրանսպորտային միջոցի ձեռքբերման եղանակը (ընտրությամբ՝ գնում, նվիրատվություն, ժառանգություն, այլ)

-ձեռքբերման գինը, արժույթը:

Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցը ձեռք է բերվել նվիրատվության, ժառանգության կամ այլ եղանակով՝ ձեռքբերման գինը (արժեքը) սյունակում լրացնել ***«0»,*** *իսկ ձեռքբերման արժույթը սյունակում՝* ***«AMD»:***

6.5. Եթե առկա է Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների հարցաթերթիկի լրացման օրվան նախորդող ամսվա վերջին օրվանից սկսած 1 տարվա ընթացքում 90 օր և ավելի փաստացի տիրապետվող տրանսպորտային միջոց կամ Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոց, կամ տրանսպորտային միջոց, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները**,** ապա ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-տնօրինողի անունը, ազգանունը, հայրանունը,

-սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը

-առկա տրանսպորտային միջոցի տեսակը,

-մակնիշը, սերիան,

-թողարկման տարին,

-նույնականացման համարը,

-սեփականատիրոջ հետ առկա կապի բնույթը:

6.6. Եթե Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները հանդիսանում է (են) բաժնային արժեթղթերի կամ այլ ներդրումների սեփականատեր, ապա **«Արդյոք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները հանդիսանու՞մ եք (են) բաժնային արժեթղթերի կամ այլ ներդրումների սեփականատեր»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը,

-ընկերության լրիվ անվանումը,

-բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը (ընտրությամբ՝ բաժնետոմս, պարտատոմս, բաժնեմաս և այլն),

-ձեռքբերման ամսաթիվը,

-ձեռքբերման եղանակը (ընտրությամբ՝ գնում, նվիրատվություն, ժառանգություն, այլ),

-գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն,

-առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման՝ արժեքը (գինը), արժույթը, բաժնեմասնակցության տոկոսը:

6.7. Եթե առկա են Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ կամ բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ, որից փաստացի օգուտ է (են) ստանում կամ այն տնօրինում է (են) Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները, ապա ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-տնօրինողի անունը, ազգանունը, հայրանունը,

-բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը,

-ընկերության լրիվ անվանումը,

-Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը,

-բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը,

-ձեռքբերման եղանակը (ընտրությամբ՝ գնում, նվիրատվություն, ժառանգություն, այլ),

-առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման՝ արժեքը (գինը), արժույթը, բաժնեմասնակցության տոկոսը:

6.8. Եթե առկա են Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների կողմից հանձնված փոխառություններ, ապա «**Արդյոք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամներն ունե՞ք (ունե՞ն) հանձնված փոխառություններ**», ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-փոխատուի անունը, ազգանունը, հայրանունը,

-պարտապանի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը,

-պարտապանի հասցեն,

-տրված փոխառության՝ գումարը, արժույթը, տոկոսադրույքը:

Կառուցվող շենքից հիփոթեքային վարկավորմամբ անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացը Հարցաթերթիկում արտացոլվում է հետևյալ կերպ.

ա) Կառուցապատողին անշարժ գույքի գնման իրավունքի դիմաց սեփական միջոցներից վճարվող կանխավճարը (օրինակ՝ անշարժ գույքի արժեքի 20%-ի չափով) Հարցաթերթիկում նշվում է որպես կառուցապատողին հանձնված փոխառություն:

բ) Կառուցապատողին անշարժ գույքի գնման իրավունքի դիմաց հիփոթեքային վարկի միջոցներից վճարվող գումարը (օրինակ՝ անշարժ գույքի արժեքի 80%-ը), այդ թվում՝ վարկի գումարը փրանշերով ստանալու դեպքում, Հարցաթերթիկում արտացոլվում է միաժամանակ 2 բաժիններում՝ եկամուտներ բաժնում՝ որպես ստացված եկամուտ (վարկ) և «Հանձնած փոխառություններ» բաժնում՝ որպես տրված փոխառություն կառուցապատողին:

«Հանձնած փոխառություններ» բաժնում սեփական միջոցներից տրված կանխավճարը և հիփոթեքային վարկից վճարված գումարը Թեկնածուն կարող է լրացնել հանրագումարով, սակայն «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում տրվում է մանրամասն բացատրություն, թե հանրագումարի որ մասն է սեփական միջոցներից, որը՝ վարկային:

6.9. Եթե առկա են **Թեկնածուի ընտանիքի անդամների անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձի հանձնված և վերադարձված փոխառություններ, որից փաստացի օգուտ է (են) ստանում կամ տնօրինում է (են) Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները,** ապա ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-տնօրինողի անունը, ազգանունը, հայրանունը,

-երրորդ անձի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը,

-տնօրինողի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը,

-տրված փոխառության գումարը, արժույթը, տոկոսադրույքը:

6.10. Եթե առկա են Թեկնածուին կամ նրա ընտանիքի անդամներին պատկանող բանկային ավանդներ, ապա «**Արդյոք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամներն ունե՞ք (ունե՞ն) բանկային ավանդներ**» ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-ավանդատուի անունը, ազգանունը, հայրանունը,

-բանկի անվանումը,

-բանկի հասցեն (օտարերկրյա բանկի դեպքում),

-տվյալ բանկում առկա ավանդի գումարը, արժույթը, տոկոսադրույքը:

6.11. Եթե առկա են Թեկնածուի ընտանիքի անդամների անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձի բանկային ավանդներ, որից փաստացի օգուտ է (են) ստանում կամ տնօրինում է (են) Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները, ապա ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-տնօրինողի անունը, ազգանունը, հայրանունը,

-երրորդ անձի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը,

-բանկի անվանումը

-բանկի հասցեն (օտարերկրյա բանկի դեպքում),

-տվյալ բանկում առկա ավանդի գումարը, արժույթը,

-տնօրինողի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը:

6.12. Եթե առկա են Թեկնածուին կամ նրա ընտանիքի անդամներին պատկանող չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույք (թանկարժեք գույք), ապա «**Արդյոք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամներն ունե՞ք (ունե՞ն) չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք**

ունեցող գույք (թանկարժեք գույք) » ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը,

-առկա թանկարժեք գույքի տեսակը,

-թանկարժեք գույքի նկարագրությունը,

-թանկարժեք գույքի ձեռքբերման տարին,

-թանկարժեք գույքի ձեռքբերման եղանակը (ընտրությամբ՝ գնում, նվիրատվություն, ժառանգություն, այլ),

-ձեռքբերման արժեքը (գինը), արժույթը:

Թանկարժեք գույք է *համարվում նախորդ բաժիններում չներառված՝* ***չորս միլիոն*** *դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը, օրինակ՝ թանկարժեք զարդ, կահույք, արվեստի գործ, ոսկու ձուլակտորներ և այլն: Ընդ որում,* ***չորս միլիոն*** *դրամի շեմը վերաբերվում է տվյալ թանկարժեք գույքի միավորին կամ կոմպլեկտին, այլ ոչ թե՝ թանկարժեք գույքի տեսակին:*

- ***Թանկարժեք գույքի արժեքը*** *որոշվում է դրա ձեռքբերման գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ բնամթերային եկամուտների արժեքի որոշման մեթոդով:*

- ***Առկա թանկարժեք գույքի տեսակը*** *դաշտում լրացվում է թանկարժեք գույքի տեսակը, օրինակ՝ թանկարժեք զարդ, ժամացույց, կահույք և այլն:*

- ***Թանկարժեք գույքի նկարագրություն*** *դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը, օրինակ՝ թանկարժեք գույքի մակնիշը կամ այլ հատկանիշներ:*

6.13. Եթե առկա է Թեկնածուին կամ նրա ընտանիքի անդամներին պատկանող հարցաթերթիկի լրացման օրվան նախորդող ամսվա վերջին օրվանից սկսված 1 տարվա ընթացքում 90 օր և ավելի փաստացի տիրապետվող չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույք (թանկարժեք գույք) կամ էլ

Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող թանկարժեք գույք, կամ թանկարժեք գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է (են) Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները, ապա ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-տնօրինողի անունը, ազգանունը, հայրանունը,

-գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը,

-առկա թանկարժեք գույքի տեսակը,

-թանկարժեք գույքի նկարագրությունը,

-ձեռքբերման արժեքը (գինը), արժույթը,

-տնօրինողի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը:

6.14. Եթե առկա է (են) Թեկնածուին կամ նրա ընտանիքի անդամներին պատկանող կանխիկ դրամական միջոցներ, ապա **«Արդյոք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամներն ունե՞ք (ունե՞ն) կանխիկ դրամ»** ենթաբաժնի գունանշված դաշտի անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է՝

-սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը,

-առկա կանխիկ դրամի՝ գումարի չափը, արժույթը,

-առկա կանխիկ դրամի ծագման աղբյուրը:

6.15. Եթե առկա է (են) Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին պատկանող կանխիկ դրամ, կամ կանխիկ դրամ, որից փաստացի օգուտ է (են) ստանում կամ այն տնօրինում է (են) Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները, ապա ենթաբաժնի գունանշված դաշտի

աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-տնօրինողի անունը, ազգանունը, հայրանունը,

-կանխիկ դրամի սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը,

-տնօրինողի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը,

-առկա կանխիկ դրամի գումարը, արժույթը

-առկա կանխիկ դրամի ծագման աղբյուրը:

6.16. Եթե Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամներն ունեն բանկային հաշվի մնացորդներ (բացառությամբ ավանդների), ապա ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը,

-բանկի անվանումը,

-բանկի հասցեն (օտարերկրյա բանկի դեպքում)

-առկա դրամական միջոցի՝ գումարի չափը, արժույթը և ծագման աղբյուրը:

6.17. Եթե Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամներն ունեն իրենց անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին պատկանող բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների), կամ այն բանկային հաշիվների մնացորդները (բացառությամբ ավանդների), որից փաստացի օգուտ է (են) ստանում կամ այն տնօրինում է (են) Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամները, ապա սույն ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-տնօրինողի անունը, ազգանունը, հայրանունը,

-բանկային հաշիվների մնացորդների սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը,

-բանկի անվանումը,

-բանկի հասցեն (օտարերկրյա բանկի դեպքում),

-տնօրինողի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը,

-առկա դրամական միջոցի՝ գումարի չափը, արժույթը և ծագման աղբյուրը:

6.18. Եթե Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամի մոտ առկա է (են) էլեկտրոնային հաշիվներ և կրիպտոարժույթ, ապա **«Արդյոք Ձեր կամ Ձեր ընտանիքի անդամների մոտ առկա՞ են էլեկտրոնային հաշիվներ և կրիպտոարժույթ»** ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը,

-առկա դրամական միջոցի՝ տեսակը, գումարի չափը, արժույթը և ծագման աղբյուրը:

6.19. Եթե առկա է (են) Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամների անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին պատկանող էլեկտրոնային հաշիվներ և կրիպտոարժույթ, կամ էլեկտրոնային հաշիվներ և կրիպտոարժույթ, որից փաստացի օգուտ է (են) ստանում կամ այն տնօրինում է (են) Թեկնածուի ընտանիքի անդամները**,** ապա սույն ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-տնօրինողի անունը, ազգանունը, հայրանունը,

-էլեկտրոնային հաշիվների և կրիպտոարժույթի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը,

-տնօրինողի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը,

-առկա դրամական միջոցի՝ տեսակը, գումարի չափը, արժույթը և ծագման աղբյուրը:

6.20. Եթե Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամի մոտ առկա է (են) եկամուտներ, որոնք նա (նրանք) ստացել է (են) հարցաթերթիկի լրացմանը նախորդող վերջին երեք տարիներին, ապա «**Արդյոք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները վերջին երեք տարիներին ստացե՞լ եք եկամուտներ**» ենթաբաժնի գունանշված դաշտի աջ անկյունում մկնիկի ձախ սեղմակի միջոցով բացվող ընտրության վահանակում ընտրելով **«Այո»** պատասխանը՝ համապատասխան բացված դատարկ սյունակներում լրացնում է/ընտրում է.

-եկամուտ ստացող անձի անունը, ազգանունը, հայրանունը,

-եկամտի տեսակը (օրինակ՝ աշխատավարձ, գույքի օտարում, արժեթղթերի օտարում, ստացված վարկ, շահաբաժին, շահում, նվիրատվություն կամ օգնություն, կենսաթոշակ, միանվագ վճարներ, ապահովագրական հատուցման գումար, վարձակալություն, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված, ժառանգություն, ստացված տոկոսային եկամուտ և այլն),

-եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը,

-եկամուտ վճարողի հասցեն,

-ստացված եկամտի՝ գումարը և արժույթը,

-բնամթերային ձևով ստացված եկամուտը (դրան համարժեք ՀՀ դրամ):

Այն դեպքում, երբ Թեկնածուն կամ նրա ընտանիքի անդամը եկամուտներ են ստացել եկամուտ վճարող նույն կազմակերպությունից կամ ֆիզիկական անձի կողմից՝ եկամուտները կարող են ներկայացնել հանրագումարային՝ մեկ սյունակում:

Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները կարող են ներկայացվել նույն աղբյուրից ստացված աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների հետ՝ հանրագումարով:

Ներկայացման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում մեկ կամ մի քանի աղբյուրից ստացված տվյալ տեսակի եկամուտը կամ նույն տեսակի եկամուտների հանրագումարը (նվիրատվություն, շահում, քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված եկամուտ և այլն), որի արժեքը չի գերազանցում 200 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, բացառությամբ աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների:

Թեկնածուի բանկային հաշիվներին հասանելի չօգտագործված վարկային գծի և օվերդրաֆթի գումարները եկամուտ չեն համարվում, քանի դեռ չեն օգտագործվել: Որպես եկամուտ ներկայացվում է Թեկնածուի վարկային գծի և օվերդրաֆթի օգտագործված և չմարված գումարը:

Պայմանագրով չկարգավորվելու դեպքում ***բնամթերային եկամուտներն*** *արտացոլվում են ստացման տարում՝ այն ձեռք բերելու հնարավոր գնով: Հնարավոր գին է համարվում այն գինը, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների համար կամ այն գինը, որով գույքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը համաձայն է վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը համաձայն է ձեռք բերել այդ գույքը: Այդ նպատակով կիրառելի են, մասնավորապես, առուվաճառքով զբաղվող սուբյեկտների (բրոքերների, խանութների, բորսաների, տոնավաճառների, շուկաների և այլն) գները, գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ համացանցի միջոցով ստացված տվյալները և այլն:*

IV. ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ավտոմատ կարգով PDF ձևաչափով արտահանված հարցաթերթիկը Թեկնածուի կողմից տպվում է, ստորագրվում յուրաքանչյուր էջի ներքևում, այնուհետև՝ տպված

տարբերակը ներկայացվում է իրավասու մարմին: Միաժամանակ, հարցաթերթիկի էլեկտրոնային տարբերակը (Excel ձևաչափով) ուղարկվում է Հանձնաժողովի իրավասու ստորաբաժանման պաշտոնական էլեկտրոնային փոստի integrity@cpcarmenia.am հասցեին:

Անձին նույնականացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հանձնաժողովի իրավասու ստորաբաժանման պաշտոնական՝ integrity@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին նամակը ենթակա է ներկայացման բարեվարքության ուսումնասիրություն անցնող անձի էլեկտրոնային փոստի հասցեից: